Անօդաչու թռչող սարքի հետազոտման, գնահատման և վերանորոգման *(DIAR)* ծրագիր

Որպես անվտանգ և հուսալի էներգիա ապահովելու մեր հանձնառության մաս՝ մենք ակտիվորեն լուծում ենք հրդեհի վտանգը:

Մաքուր, անվտանգ և հուսալի էներգիա ապահովելու մեր հանձնառությունը նշանակում է մեր էլեկտրահաղորդալարերի ընթացիկ ուսումնասիրություններ և գնահատումներ:

Անօդաչու թռչող սարքերի հետազոտման, գնահատման և վերանորոգման (DIAR) ծրագիրը SDG&E-ի Անտառային հրդեհների նվազեցման ծրագրի (WMP) ջանքերի մի մասն է: DIAR ծրագիրը բարելավում է SDG&E-ի վերգետնյա էլեկտրահաղորդալարերի և սարքավորումների գնահատումը հայտնաբերված Բարձր հրդեհավտանգ Մակարդակ 3 շրջանի տարածքներում (տե՛ս քարտեզը՝ հետևի մասում):

DIAR ծրագրի մասին

SDG&E-ի Անտառային հրդեհների նվազեցման ծրագրի աջակցման նպատակով՝ DIAR ծրագիրը կստուգի SDG&E® էլեկտրահաղորդալարերը՝ օգտագործելով դրոնների տեխնոլոգիան՝ բացահայտելու անհրաժեշտ վերանորոգումները կամ բարելավումները և նվազեցնելու անտառային հրդեհների վտանգը:

Ինչ ակնկալել

SDG&E անձնակազմերը և/կամ մեր հաստատված կապալառուները կիրականացնեն օդային էլեկտրահաղորդալարերի համապարփակ գնահատում՝ ձեր սեփականության վրա կամ մոտակայքում՝ օգտագործելով անօդաչու թռչող սարք:

Այս գնահատումն ավարտելու համար SDG&E անձնակազմերին և/կամ կապալառուներին անհրաժեշտ կլինի մուտք գործել մեր էլեկտրահաղորդալարերի կցակառույցներ և ձեր սեփականությունում կամ դրա մերձակայքում սերվիտուտի իրավունքի հիման վրա գործող վայրեր:

Դրոնները կօգտագործվեն՝ հավաքելու SDG&E էլեկտրական ենթակառուցվածքի լուսանկարները, որոնք կգնահատվեն SDG&E անձնակազմի կողմից: Ծրագրի նպատակն է լուսանկարել SDG&E-ի ենթակառուցվածքը,

այլ ոչ թե հարակից տարածքները: Խնդրում ենք տեսնել այս փաստաթղթի հետևի էջում SDG&E-ի կողմից արված լուսանկարների օրինակները: Անօդաչու սարքերի հետ կապված գործողությունները կարող են ժամանակավորապես բարձրացնել շրջակա միջավայրի աղմուկի կամ փոշու մակարդակը:

Անօդաչու սարքերի գնահատման ժամանակ ձեր էլեկտրական ծառայությունը կշարունակվի առանց ընդհատումների: Այս գնահատումները տեղի կունենան աշնան սկզբից և կշարունակվեն մինչև 2020 թվականի վերջ:

Կոնտակտային տվյալներ

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք զանգահարել տեղեկատվական թեժ գիծ՝ **1-844-765-6388** անվճար հեռախոսահամարով կամ այցելել DIAR ծրագրի կայքէջը՝ ***sdge.com/drone-program*** հասցեով:

շարունակությունը՝ դարձերեսին

Բարձր հրդեհավտանգ շրջանների քարտեզ



DIAR ծրագրի համար պատկերված նկարների օրինակներ



P.O. Box 129831 | San Diego, CA 92112-9831 | 1-800-411-7343 | Connect at **sdge.com**

© 2019 San Diego Gas & Electric Company. Բոլոր հեղինակային իրավունքները և ապրանքային նշանի իրավունքները պաշտպանված են: S1970151 1019 XM